Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N 16

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստի

<<10>> հոկտեմբերի 2023թ. ք. Երևան

2023 թվականի սեպտեմբերի 19-ին տեղի ունեցավ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության լիցենզավորման հանձնաժողովի նիստը:

Հանձնաժողովի 6 անդամներից նիստին մասնակցում էին՝

Ա. Խաչատրյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ, հանձնաժողովի նախագահի տեղակալ
Ա. Ստեփանյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության լիցենզավորման և թույլտվությունների բաժնի պետ, հանձնաժողովի անդամ
Խ. Սողոմոնյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության պետ, հանձնաժողովի անդամ
Տ. Գասպարյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության երկաթուղային և ջրային տրանսպորտի քաղաքականության վարչության պետի տեղակալ, հանձնաժողովի անդամ
Ռ. Այվազյան	Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության, լիցենզավորման և թույլտվությունների վարչության ավտոմոբիլային տրանսպորտի քաղաքականության բաժնի պետ, հանձնաժողովի անդամ:

Նիստը նախագահում էր հանձնաժողովի նախագահի տեղակալ Ա. Խաչատրյանը: Նիստից բացակայում էր հանձնաժողովի նախագահ Ա. Սիմոնյանը:
Նիստն արձանագրում էր Ա. Ստեփանյանը:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ Ո Ւ Մ

1.Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և լիցենզիայի ներդիր տրամադրելու համար ներկայացված 1 հայտի քննարկում:

1. Տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության իրականացման լիցենզիա և ներդիր տրամադրելու համար ներկայացված հայտի քննարկում

Քննարկվեց՝

«ԱՆՓՈՐՁԱՆՔ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության /այսուհետ՝ Կազմակերպություն/ 2023 թվականի սեպտեմբերի 18-ի հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը և սեպտեմբերի 28-ին ի լրումն նրկայացված նյութերը՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվերսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին:

Ա. Ստեփանյանը ներկայացրեց, որ Կազմակերպությունը 2023 թվականի սեպտեմբերի 18-ին ներկայացրել է հայտ և հայտին կից փաստաթղթեր՝ տրանսպորտային միջոցների տեխնիկական զննության գործունեության լիցենզիա և ունիվեսալ հոսքագծի ներդիր տրամադրելու մասին՝ ՀՀ, Տավուշի մարզ, համայնք Նոյեմբերյան, գ. Հաղթանակ, 1-ին փողոց 80 գործունեության վայրում: 2023 թվականի սեպտեմբերի 28-ին Կազմակերպությունը ներկայացրել է լրացուցիչ նյութեր՝ վերացնելով հայտում և հայտին կից փաստաթղթերում առկա թերությունները:

Կազմակերպության արտադրական բազայի ուսումնասիրությունն իրականացվել է Տավուշի մարզպետի աշխատակազմի աշխատակիցների կողմից, որի վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացվել է Տավուշի մարզպետի 2023 թ. հոկտեմբերի 6-ի մտից՝ Մ/60604 գրությամբ:

Լիցենզավորման հանձնաժողովի անդամները ուսումնասիրեցին ներկայացված փաստաթղթերը:

Հարցի քննարկմանը մասնակցեցին լիցենզավորման հանձնաժողովի՝ նիստին մասնակցող բոլոր անդամները. տեղի ունեցավ փակ գաղտնի քվեարկություն, քվեարկության թերթիկները փոխանցվեց լիցենզավորման հանձնաժողովի անդամ՝ պատասխանատու քարտուղար՝ Ա. Ստեփանյանին:

Ա. Ստեփանյանը

Հայտարարեց քվեարկության արդյունքները և արձանագրվեց՝

«ԱՆՓՈՐՁԱՆՔ» ՍՊԸ	5 կողմ, 0 դեմ

Որոշեցին՝

Ներկայացված հայտը և հայտին կից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են ՀՀ կառավարության 2007 թվականի փետրվարի 15-ի N 690-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի և ՀՀ կառավարության 2021 թվականի սեպտեմբերի 24-ի N 1565-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի պահանջներին՝ ենթակա է լիցենզավորման:

Համաձայն <<Լիցենզավորման մասին>> օրենքի 40-րդ հոդվածի 9-րդ մասի՝ եզրակացությունը ներկայացնել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին:

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի
նախագահի տեղակալ Ա. Խաչատրյան

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարության
լիցենզավորման հանձնաժողովի քարտուղար Ա. Ստեփանյան